ՀՀ շրջակա միջավայրի նախարարության
գլխավոր քարտուղար Ս. Աթանեսյանին

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2023 թվականի նոյեմբերի 26-ից 29-ը Շվեյցարիայի Համադաշնության Ժնև քաղաք գործուղման վերաբերյալ

Գործուղվող անձ
Իրավախորհրդատու Մարի Չաքրյան

Երկիր/քաղաք/ժամկետ
Շվեյցարիայի Համադաշնություն, Ժնև, 2023 թվականի նոյեմբերի 26-29-ը:

Հրավիրող կողմ
ՄԱԿ Եվրոպական տնտեսական հանձնաժողովի Բնապահպանական բաժին, «Շրջակա միջավայրի վերաբերյալ տեղեկատվության հասանելիության, որոշումների կայացմանը հանրության մասնակցության և արդարադատության մատչելիության մասին» (Օրհուսի) կոնվենցիայի քարտուղարություն:

Նպատակը
Մասնակցել Աղտոտիչների արտանետման և տեղափոխման ռեգիստրի մասին (ԱԱՏՌ) արձանագրության կողմերի աշխատանքային խմբի 10-րդ հանդիպմանը:

Մասնակիցների շրջանակ
ԱԱՏՌ կողմերի աշխատանքային խմբի անդամներ, ՄԱԿ ԵՏՀ և այլ հարակից համաձայնագրերի քարտուղարությունների, Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (OECD) և ԵՄ ներկայացուցիչներ, միջազգային և տեղական հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ՝ ի դեմս «Էկո ֆորում» ցանցի անդամների:

Հայաստանից հանդիպմանը մասնակցել են նաև Երևանի Օրհուս կենտրոնի կազմակերպիչ Սիլվա Այվազյանը, «Դալմա-Սոնա» հիմնադրամի ղեկավար Ռուզաննա Ղազարյանը և «Բլեջան» ՀԿ նախագահ Լիաննա Ասոյանը:

Օրակարգում.
- Թարմացումներ ԱԱՏՌ արձանագրության վավերացման մասին,
- Հաշվետվողականության մեխանիզմներ,
- Ենթատարածաշրջանային և ազգային մակարդակում գործողություններ, կարիքներ և մարտահրավերներ,
- Արձանագրության կողմերի 5-րդ նստաշրջանի նախապատրաստական հարցեր,
- 2022-2025 թթ. Աշխատանքային ծրագրի ընրականացմանը ընթացիկ հարցեր,
- Այլ հարցեր,

- Ամփոփում, որոշան ընդունում:

Ելույթներ

Ներկայացրել եմ Հայաստանում ԱԱՏՌ նախադրյալների ստեղման ուղղությամբ տարվող աշխատանքը, մասնավորապես օդի աղտոտվածության խնդիրների կարգավորման ուղղությամբ օրենսդրական բարեփոխումները, ջերմոցային գազերի ռեգիստրի և մոնիթորինգի համակարգի բարելավման աշխատանքը, կառավարության Ինտեգրված կադաստրի ստեղծման ռազմավարական ծրագրով նախատասված գործողությունները՝ որպես նախադրյալ ԱԱՏՌ ռեգիստրի ստեղծման համար, Նուբարաշենի աղբավայրի հրդեհի ու նմանատիպ հնարավոր դեպքերին համարժեք և ժամանակին արձագանքելու ուղղությամբ տարվող աշխատանքների մասին, CEPA-ի համաձայնագրով ստանձնած պարտավորությունների շրջանակում առնչվող գործողությունների մասին:

Արդյունքներ

Տեղեկացա, որ ԱԱՏՌ ներդրման նպատակով կարողությունների զարգացման UNITAR-ի ծրագրի համար, որում ներգրավվելու էր նաև Հայաստանը, դեռևս համապատասխան ֆինանսական միջոցներ չեն գտնվել, ուստի ծրագիրը հետաձգվել է:

ԱԱՏՌ-ն ներկայացվեց որպես կարևոր գործիք ազգային մակարդակում կանաչ տաքսոնոմիայի զարգացման համար:

Շեշտադրվեց Օրհուս կենտրոնների դերը՝ որպես ռեգիստրի ստեղծման կարևոր հարթակ, սակայն ներկայացվեց նաև, որ հետազոտության արդյունքում վեր է հանվել դրանց կայունության խնդիրը, որի ուղղությամբ անհրաժեշտ է համապատասխան աշխատանք տանել:

Կարևորվեց ԱԱՏՌ համար համարժեք և կայուն ռեսուրսներ առկայությունը, այդ թվում քարտուղարության աշխատանքի ապահովման համար:

Աշխատանքային խումբը որոշեց,

- վերահաստատել իր կոչը կառավարություններին՝ ուժեղացնելու համագործակցությունը ԱԱՏՌ արձանագրությանն առնչվող սիներգետիկ կապեր ունեցող համաձայնագրերի ազգային համակարգողների ու փորձագետների հետ, այդ թվում. Մեծ տարածությունների վրա օդի անդրսահմանային աղտոտման մասին, Արդյունաբերական վթարների անդրսահմանային ազդեցության մասին, Անդրսահմանային ջրային հոսքերի եվ միջազգային լճերի պաշտպանության եվ օգտագործման մասին, Կլիմայի փոփոխության մասին, քիմիական նյութերին առնչվող՝ Մինամատայի և Ստոկհոլմի համաձայնագրերի, ինչպես նաև մոնիտորինգի և գույքագրման ուղղությամբ միջազգային ու տարածաշրջանային ծրագրերի՝ ազգային մակարդակում համակարգումն ապահովելու նպատակով,
- կրկնել իր կոչը ԱԱՏՌ արձանագրության Կողմերին և շահագրգիռ կողմերին՝ քննարկելու արձանագրության իրականացումը և միասնական տեղեկատվական համակարգին միանալու հնարավորությունը:
- Որոշումը հասանելի է հղումով՝ https://unece.org/sites/default/files/2023-11/Protocol_WGP-10_Outcomes_27Nov_as_adopted.pdf

Պայմանավորվածություններ

Եվրոպական Էկո-ֆորումի անդամ կազմակերպությունների նախաձեռնությամբ 4 երկրներում փորձնական ներդրվել է ԱԱՏՌ համակարգ և իրականացվել են վերապատրաստման դասընթացներ՝ հաստատված կրթական մոդուլներով: Ծրագրի Հայաստանում իրականացման հնարավորությունը քննարկեցի Գուտայի բնապահպանական իրավունքի ասոցիացիայի ղեկավար Մագդոլնա Տոտնե Նագիի հետ: Տեղեկացրեց, որ ֆինանսավորող կողմը Գերմանիայի դաշնային հանրապետության շրջակա միջավայրի, բնապահպանության և միջուկային անվտանգության նախարարությունն (BMU) է եղել: Պայմանավորվածություն ձեռքբերվեց, որ նա անձամբ կգրի Գերմանիայի գործընկերներին՝ Հայաստանում ծրագրի իրականացման հարցը դիտարկելու խնդրանքով:

Շրջակա միջավայրի նախարարության իրավախորհրդատու,
Օրհուսի կոնվենցիայի և ԱԱՏՌ արձանագրության ազգային համակարգող՝

Մ. Չաքրյան

01.12.2023